ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀԳՄ-ԳՀԽԾՁԲ-2022/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «10» օգոստոսի 2022թ.

ժամը 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Զոհրաբյան /նախագահ/,

Բացող անդամներ՝ Յու.Մուշեղյան, Ա.Մելքոնյան

Գնահատող անդամներ Գ.Խաչատրյան, Գ.Մելքոնյան

Քարտուղար՝ Ա.Բաղեյան

ՀՀԳՄ-ԳՀԽԾՁԲ-2022/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի բացման մասին

1) Գնումների համակարգող /քարտուղար/ Արթուր Բաղեյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով հայտ է ներկայացրել 3 /երեք/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«Բուլգարո» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Վ. Գետաշեն, Ա թաղ. 5-րդ փող. տ.3 bulgarollc@yandex.ru
2	«Սուրո Օսկանի» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Մարտունի Կարապետյան փողոց թիվ 15 suro-oskani@mail.ru
3	«ԿՈՓ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ ք.Մարտունի Վ.Մամիկոնյան 1 kop_ooo@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2) Ուսումնասիրելով ՀՀԳՄ-ԳՀԽԾՁԲ-2022/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

2.1) «Բուլգարո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

. Աշխատանքային ռեսուրսներ չափանիշը հավաստող փաստաթղթերը ներկայացված են թերի՝ չի պահպանվել հրավերի 2.4.1-ի պահանջները:

Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին /ներկայացված համաձայնագրերում հստակ նշելով աշխատակցի մասնակցությունը համապատասխան չափաբաժնին/, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

. Նախկինում նմանատիպ կատարված պայմանագիրը չի համապատասխում հրավերով սահմանված պահանջներին՝ պայմանագրի կատարումն հավաստող փաստաթղթերը բացակայում են, պայմանագրի գինը պակաս է «Բուլգարո» ՍՊԸ–ի կողմից ներկայացված գնային առաջարկից:

Մասնակիցը իր համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության ծավալը (կամ

հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2.2) «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում բացակայում է"
Հրավերի 2.4.1 կետով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները հավաստող փաստաթղթերը:

2.3) «Կոփ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայում է՝
Հրավերի 2.4.1 կետով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները հավաստող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3) Հիմք ընդունելով վերը նշվածը և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը, գնահատող հանձնաժողովը **որոշեց**՝
1. Կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով՝ «Բուլգարո» ՍՊԸ-ին, «Սուրո Օսկանի» ՍՊԸ-ին և «Կոփ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել բոլոր անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակիցների ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի օգոստոսի 15-ին ժամը 15:00-ին՝ ք.Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 երկրորդ հարկ, 205 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
նախագահ՝		Ա.Զոհրաբյան
անդամներ՝		Յու.Մուշեղյան
		Ա.Մելքոնյան
		Գ.Խաչատրյան
		Գ.Մելքոնյան
քարտուղար՝		Ա.Բաղեյան